Հավելված N1
Հայաստանի Հանրապետության
պետական եկամուտների կոմիտեի նախագահի
2020 թվականի ապրիլի 17-ի
N 337-Ն հրամանի

Ձև

ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀՐԱՊԱՐԱԿՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ
ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
Հիմնադրամի հոգաբարձուների
խորհրդի 27-03-2024 թ. որոշմամբ
«ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՄԱԹԵՄԱՏԻԿԱ ՀԻՄՆԱԴՐԱՄ»
Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն
հիմնադրամի 2023 թ. գործունեության մասին

1. Հիմնադրամի՝		
1.1 Լրիվ անվանումը		ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՄԱԹԵՄԱՏԻԿԱ ՀԻՄՆԱԴՐԱՄ
1.2 Գտնվելու վայրը		ԵՐԵՎԱՆ ԿԵՆՏՐՈՆ ԿԵՆՏՐՈՆ ԹԱՂԱՄԱՍ Բաղրամյան 24Բ
1.3 Պետական գրանցման համարը		222.160.02411
1.4 Պետական գրանցման տարին, ամիսը, ամսաթիվը		1998-11-20
1.5 ՀՎՀՀ-ն		00053527
1.6 Հեռախոսը (այդ թվում՝ բջջային)		+(374)93214807
1.7 Պաշտոնական ինտերնետային կայքը		
1.8 Էլեկտրոնային փոստը		sart@ysu.am
2. Հիմնադրի անուն, ազգանուն կամ անվանում՝		
Արշակ Հաջյան		
3. Հոգաբարձուների խորհրդի անդամների անուն, ազգանուն՝		
4. Կառավարչի անուն, ազգանուն՝		
Արթուր Սահակյան		
5. Աշխատակազմում ընդգրկված անձանց քանակը	1	
6. Անձեռնմխելի կապիտալի չափը	0	
7. Անձեռնմխելի կապիտալի կառավարումից ստացված եկամուտ	0	
8. Ֆինանսավորման աղբյուրները՝		
8.1 Ֆինանսավորումն ըստ խմբերի	8.2 Ստացված ֆինանսական միջոցների նպատակը	8.3 Չափը
8.1.1 Պետական և համայնքային բյուջեներից դրամական մուտքեր		
8.1.2 Իրավաբանական անձանցից դրամական մուտքեր		
	Ֆինանսական աջակցություն	4,093,844
	Եկամուտ տոկոսներից	1,187,221
	Գիտաժողովի և ամառային դպրոցի կազմակերպում	3,866,100
8.1.3 Ֆիզիկական անձանցից դրամական մուտքեր		
9. Հիմնադրի ներդրումը՝		

Digitally signed by
SAHAKYAN ARTUR
1205560203
Date: 2024.04.10
20:04:40 AMT

9.1 Դրամական միջոցներ		
9.2 Գույք	9.2.1 Տեսակը	9.2.2 Արժեքը
10. Նվիրատվությունները/ նվիրաբերությունները		
10.1 Նվիրատուները/նվիրաբերողներն ըստ խմբերի՝	10.2 Նվիրված/նվիրաբերված գույք	
	10.2.1 Տեսակը	10.2.2 Արժեքը
10.1.1 Հայաստանի Հանրապետություն/համայնքներ		
10.1.2 Իրավաբանական անձինք		
10.1.3 Ֆիզիկական անձինք		
11. Իրականացված ծրագրերը՝		
11.1 Ծրագրի անվանումը	11.2 Ծախսված գումարը	
Աջակցություն միջազգային գիտաժողովին	1,108,850	
Օժանդակություն միջազգային ուսանողական մաթ օլիմպիադայի մասնակիցների	909,270	
Աջակցություն ԵՊՀ մաթ և մեխ ֆակուլտետին՝	728,000	
Աջակցություն ամառային դպրոցին	838,260	
12. Ֆինանսական տարում օգտագործված միջոցների ընդհանուր չափը	4,821,280	
13. Կանոնադրական նպատակների իրականացմանն ուղղված ծախսերի չափը	3,584,380	

Նշումներ՝

Ֆինանսական հաշվետվություններն ու ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտն իրականացնող անձի (աուդիտորի) եզրակացությունը՝ 12 էջերից:

էջերի քանակը

Հիմնադրամի տնօրեն _____

ստորագրությունը, անունը, ազգանունը

Գլխավոր հաշվապահ _____

ստորագրությունը, անունը, ազգանունը

«ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՄԱԹԵՄԱՏԻԿԱ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

2023Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ ԱՎԱՐՏՎԱԾ ՏԱՐԻ

ՀՀ, ք. Երևան, Խանջյան 19, 4-րդ հարկ, գրասենյակ 5, Հեռ.՝ +37411-577-544,
էլ.հասցե՝ audit@pkfarmenia.com, վեբ կայք՝ www.pkfarmenia.com

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՄԱԹԵՄԱՏԻԿԱ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻՆ

ԿԱՐԾԻՔ

Մեր կողմից իրականացվել է «ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՄԱԹԵՄԱՏԻԿԱ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ (այսուհետ՝ Հիմնադրամ) ֆինանսական հաշվետվությունների աուդիտը, ընդ որում այդ հաշվետվությունները ներառում են 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, նույն ամսաթվին ավարտված տարվա համապարփակ ֆինանսական արդյունքների, սեփական կապիտալում փոփոխությունների, դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, որոնք ներառում են հաշվապահական հաշվառման քաղաքականությունը:

Մեր կարծիքով, կից ֆինանսական հաշվետվությունները տալիս են Հիմնադրամի՝ 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի և նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքների ու դրամական հոսքերի ճշմարիտ և իրական պատկերը՝համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ-ներ):

ԿԱՐԾԻՔԻ ՀԻՄՔԵՐ

Մենք աուդիտն իրականացրել ենք աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է մեր եզրակացության՝ «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում: Անկախ ենք Հիմնադրամից՝ համաձայն Հաշվապահների միջազգային դաշնության պրոֆեսիոնալ հաշվապահների վարքագրքի (ՀՄԴ-ի Վարքագիրք) և Հայաստանի Հանրապետությունում կիրառելի՝ֆինանսական հաշվետվությունների աուդիտի նկատմամբ վարքագծի պահանջների, կատարել ենք վարքագծի նկատմամբ մեր մյուս պարտականությունները՝այդ պահանջների համաձայն: Համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝մեր կարծիքն արտահայտելու համար:

ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅԱՆ և ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՕՂԱԿՆԵՐՈՒՄ ՆԵՐԳՐԱՎՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Հիմանդրամի ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-ներին համապատասխան ֆինանսական հաշվետվությունների կազմման և ճշմարիտ ներկայացման համար: Այդ նպատակով ղեկավարությունը սահմանում է անհրաժեշտ վերահսկողության համակարգ, որը թույլ է տալիս պատրաստել ֆինանսական հաշվետվություններ, որոնք զերծ են խարդախության կամ սխալի արդյունքում էական խեղաթյուրումից:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս՝ ղեկավարությունը պատասխանատու է Հիմնադրամի անընդհատ գործելու հնարավորությունը գնահատելու, անընդհատ գործելուն առնչվող հարցերը բացահայտելու (եթե կիրառելի է), ինչպես նաև գործունեության անընդհատության

ենթադրության վրա հիմնված հաշվառում վարելու համար, քանի դեռ ղեկավարությունը չի նախատեսում լուծարել Հիմնադրամը կամ դադարեցնել դրա գործունեությունը կամ չունի իրատեսական այլընտրանք, բացի նշվածները:

Կառավարման օղակներում ներգրավված անձիք պատասխանատու են Հիմնադրամի ֆինանսական հաշվետվությունների կազմման գործընթացը վերահսկելու համար:

ԱՈՒԴԻՏՈՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՈՒԴԻՏԻ ՀԱՄԱՐ

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում՝խարդախությունների կամ սխալների հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրումներից զերծ լինելու վերաբերյալ, ինչպես նաև ներկայացնել աուդիտորի եզրակացություն, որը կներառի մեր կարծիքը: Ողջամիտ հավաստիացումը բարձր աստիճանի հավաստիացում է, սակայն այն երաշխիք չի հանդիսանում, որ ԱՄՍ-ների համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումներ, երբ այդպիսիք կան: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի հետևանքով և համարվում են էական, եթե ակնկալվում է, որ դրանք առանձին-առանձին կամ միասին վերցված կարող են ազդել այս ֆինանսական հաշվետվությունների օգտագործողներիդրանց հիման վրա կայացրած տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համապատասխան իրականացվող աուդիտի շրջանակներում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում ենք մասնագիտական կասկածամտություն ամբողջ աուդիտի ընթացքում: Բացի այդ, մենք.

- Բացահայտում և գնահատում ենք ֆինանսական հաշվետվություններում խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք այդ ռիսկերին ուղղված աուդիտորական ընթացակարգեր և ձեռք ենք բերում բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝մեր կարծիքն արտահայտելու համար: Խարդախության արդյունք հանդիսացող էական խեղաթյուրման չբացահայտման ռիսկն ավելի մեծ է, քան սխալի հետևանքով առաջացած խեղաթյուրման չբացահայտման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, փաստաթղթերի կեղծում, միտումնավոր բացթողումներ, կեղծ հայտարարությունների տրամադրում կամ ներքին վերահսկողության համակարգի չարաշահում:

- Պատկերացում ենք կազմում աուդիտին առնչվող ներքին վերահսկողության վերաբերյալ, որպեսզի մշակենք համապատասխան աուդիտորական ընթացակարգեր, բայց ոչ՝ Հիմնադրամի ներքին վերահսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:

- Գնահատում ենք կիրառվող հաշվապահական հաշվառման քաղաքականության պատշաճությունը, ինչպես նաև ղեկավարության կատարված հաշվապահական գնահատումների և համապատասխան բացահայտումների ողջամտությունը:

- Եզրահանգումներ ենք կատարում ղեկավարության կողմից անընդհատության սկզբունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և ձեռք բերված աուդիտորական ապացույցների հիման վրա հետևություն ենք անում, թե արդյոք առկա՞ է իրադարձությունների կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը կարող է էական կասկած առաջացնել Հիմնադրամի անընդհատ գործելու հնարավորության վերաբերյալ: Եթե գալիս ենք եզրահանգման, որ գոյություն ունի էական անորոշություն, պետք է մեր աուդիտորական եզրակացությունում ուշադրություն հրավիրենք ֆինանսական հաշվետվություններում համապատասխան բացահայտումներին, կամ, եթե նման բացահայտումները պատշաճ կերպով ներկայացված չեն, պետք է ձևափոխենք կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր աուդիտորական եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Այնուամենայնիվ, ապագա իրադարձությունները կամ հանգամանքները կարող են հանգեցնել նրան, որ Հիմնադրամը կորցնի իր անընդհատ գործելու կարողությունը:

- Գնահատում ենք ընդհանուր առմամբ ֆինանսական հաշվետվությունների ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները և արդյո՞ք ֆինանսական հաշվետվությունները ներկայացնում են դրանց հիմքում ընկած գործարքներն ու իրադարձությունները այն ձևով, որն ապահովում է ճշմարիտ ներկայացումը:

Այլ հարցերի հետ մեկտեղ, մենք հաղորդակցում ենք կառավարման օղակներում ներգրավված անձանց հետ աուդիտի պլանավորված շրջանակների և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված էական թերացումների վերաբերյալ, որոնք ներառում են աուդիտի ընթացքում մեր կողմից բացահայտված ներքին վերահսկողության կարևոր թերությունները:

Ք. Երևան- 06.02.2024թ.

ՊԻ ԿԱ ԷՖ ԱՈՒԴԻՏ ՍԵՐՎԻՍ ՍՊԸ

Գլխավոր տնօրեն՝ Գոռ Դավթյան

«ՊԻ ԿԱ ԷՖ ԱՈՒԴԻՏ ՍԵՐՎԻՍ» "PKF AUDIT SERVICE" 00419022

Որակավորված աուդիտոր՝ Անահիտ Միրզոյան

«ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՄԱԹԵՄԱՏԻԿԱ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

ՀՀ դրամ	Ծնթգ.	31.12.2023թ.	31.12.2022թ.
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ		-	-
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ		**-**	**-**
Ընթացիկ ակտիվներ			
Պաշարներ		-	-
Դեբիտորական պարտքեր և տրված կանխավճարներ		-	-
Կարճաժամկետ դեբիտորական պարտքեր բյուջեի գծով		5,500	69,756
Ընթացիկ ֆինանսական ներդրումներ/ավանդ/	5	29,382,164	21,605,781
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	4	9,072,001	11,558,451
Այլ ընթացիկ ակտիվներ			-
Ընդամենը ընթացիկ ակտիվներ		**38,459,665**	**33,233,988**
Ընդամենը ակտիվներ		**38,459,665**	**33,233,988**
Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Ակտիվներին վերաբերող շնորհներ		-	-
Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ			
Ընթացիկ պարտավորություններ			
Եկամուտներին վերաբերող շնորհներ		37,946,962	33,147,513
Աշխատավարձի գծով պարտավորություն		218,890	68,010
Ընթացիկ հարկային պարտավորություններ		293,813	18,465
Այլ ընթացիկ պարտավորություններ		-	-
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ		**38,459,665**	**33,233,988**
Ընդամենը պարտավորություններ		**38,459,665**	**33,233,988**

Ֆինանսական հաշվետվությունները (էջ 1-8) հաստատվել են ղեկավարության կողմից 2024թ. փետրվարի 6-ին:

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՄԱԹԵՄԱՏԻԿԱ ՀԻՄՆԱԴՐԱՄ

ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆ՝ ԱՐԹՈՒՐ ՍԱՀԱԿՅԱՆ

«ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՄԱԹԵՄԱՏԻԿԱ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն

2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի

ՀՀ դրամ	Ծնթգ.	2023թ.	2022թ.
Ծառայությունների մատուցումից եկամուտ		3,866,000	-
Եկամուտներին վերաբերող շնորհներից եկամուտ		1,637,570	5,256,244
Եկամուտ տոկոսներից		1,187,221	1,207,621
Այլ եկամուտ		299,334	6,684,374
Ընդամենը եկամուտներ		**6,990,125**	**13,146,879**
Մատուցված ծառայությունների գծով ծախսեր		(1,937,110)	-
Վարչական ծախսեր		(1,437,850)	(1,748,749)
Գործառնական ծախսեր		(1,637,570)	(3,507,495)
Այլ ծախսեր		(2,658,359)	(1,207,621)
Ընդամենը ծախսեր		**(7,670,889)**	**(6,463,865)**
Արտարժույթի փոխարժեքային տարբերությունից օգուտ (վնաս)		979,998	(6,684,374)
Հաշվետու տարվա զուտ շահույթ/(վնաս) նախքան շահութահարկը		**299,234**	**-**
Շահութահարկի գծով ծախս		(299,234)	-
Տարվա արդյունք		**-**	**-**

Ֆինանսական հաշվետվությունները (էջ 1-8) հաստատվել են ղեկավարության կողմից 2024թ. փետրվարի 6-ին:

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՄԱԹԵՄԱՏԻԿԱ ՀԻՄՆԱԴՐԱՄ

ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆ՝ **ԱՐԹՈՒՐ ՍԱՀԱԿՅԱՆ**

«ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՄԱԹԵՄԱՏԻԿԱ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն

2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի

ՀՀ դրամ	2023թ.	2022թ.
Դրամական միջոցների հոսքեր գործառնական գործունեությունից		
Ստացված դրամաշնորհներ	4,093,844	3,607,000
Տոկոսների ստացումից մուտքեր	2,240,162	217,313
Այլ մուտքեր	3,866,100	-
Ընդամենը մուտքեր	**10,200,106**	**3,824,313**
Օգնություն շնորհներից	(1,637,570)	(3,507,495)
Աշխատակիցներին վճարված դրամական միջոցներ	(743,000)	(612,000)
Վճարումներ պետական բյուջե	(205,600)	(179,775)
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների այլ արտահոսքեր	(2,251,060)	(868,999)
Ընդամենը ելքեր	**(4,837,230)**	**(5,168,269)**
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	**5,362,876**	**(1,343,956)**
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ (նվազում)/աճ	**5,362,876**	**(1,343,956)**
Արտարժույթի փոխարժեքային տարբերություններ	1,009,869	(6,501,754)
Դրամական միջոցները և դրանց համարժեքները հաշվետու ժամանակաշրջանի սկզբում	**31,236,951**	**39,082,661**
Դրամական միջոցների և դրանց համարժեքների մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի վերջին	**37,609,696**	**31,236,951**

Ֆինանսական հաշվետվությունները (էջ 1-8) հաստատվել են ղեկավարության կողմից 2024թ. փետրվարի 6-ին:

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՄԱԹԵՄԱՏԻԿԱ ՀԻՄՆԱԴՐԱՄ

ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆ՝ ԱՐԹՈՒՐ ՍԱՀԱԿՅԱՆ

«ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՄԱԹԵՄԱՏԻԿԱ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին բացահայտում

2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

Հիմնադրամը շահույթ ստանալու նպատակ չհետապնդող կազմակերպություն է և սեփական կապիտալի տարրեր չունի: Հաշվետու ժամանակաշրջանի գործունեության արդյունքը վերագրվում է եկամուտներին վերաբերող շնորհներին:

2024թ. փետրվարի 6

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՄԱԹԵՄԱՏԻԿԱ ՀԻՄՆԱԴՐԱՄ

ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆ՝ **ԱՐԹՈՒՐ ՍԱՀԱԿՅԱՆ**

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1.1. ՀԻՄՆԱԴՐԱՄԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

«Հետազոտական մաթեմատիկա» հիմնադրամը (այսուհետ՝ Հիմնադրամ) ստեղծվել է 2000թ. հունիսի 28-ին: Այն վերակազմակերպվել է «Հետազոտական Մաթեմատիկա» հիմնադրամ հասարակական կազմակերպությունից և հանդիսանում է նրա իրավահաջորդը:

2000թ.-ի հունիսի 28-ին հիմնադրամը գրանցվել է ՀՀ Իրավաբանական անձանց պետական ռեգիստրի կողմից: Գրանցման համարն է՝ 222.160.02411, ՀՎՀՀ-ն է՝ 00053527:

Կազմակերպության գործունեության հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24-Բ:

Հիմնադրամը քաղաքացիների կամավոր գույքային վճարների հիման վրա ստեղծված և անդամություն չունեցող կազմակերպություն է, որի նպատակն է նպաստել Հայաստանում մաթեմատիկայի հիմնարար բնագավառներում միջազգային առաջատար չափանիշներին համապատասխանող գիտական հետազոտությունների իրականացմանը, գիտական ներուժի արդիականացմանը ու զարգացմանը:

Կազմակերպության աշխատակիցների միջին թվաքանակը 2023թ. կազմել է 1 մարդ (2022թ.՝ 1 մարդ):

2. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ

2.1 ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ-ներ) համաձայն՝ հրապարակված Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) կողմից: Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են անընդհատության սկզբունքի հիման վրա:

Ներկայումս ՖՀՄՍ-ները չեն պարունակում հաշվապահական հաշվառման վարման և ֆինանսական հաշվետվությունների ներկայացման վերաբերյալ հատուկ ուղեցույցներ՝ շահույթ չհետապնդող և ոչ կառավարական կազմակերպությունների համար: Եթե ՖՀՄՍ-ները չեն տալիս ուղղություն շահույթ չհետապնդող ոլորտի կազմակերությունններին հատուկ գործարքների հաշվառման վերաբերյալ, ապա հաշվապահական հաշվառման քաղաքականությունը պետք է հիմնվի ՖՀՄՍ-ների ընդհանուր սկզբունքների վրա՝ համաձայն Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) «Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ներկայացման հայեցակարգային հիմունքների»:

3. ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ստորև ներկայացված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը կիրառվել է հետևողականորեն սույն ֆինանսական հաշվետվություններում ներկայացված բոլոր ժամանակաշրջանների նկատմամբ:

3.1 ՉԱՓՄԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի հիմունքով:

3.2 ՖՈՒՆԿՑԻՈՆԱԼ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԱՐԺՈՒՅԹԸ

Հիմնադրամի ֆունկցիոնալ արժույթը Հայաստանի Հանրապետության ազգային արժույթն է՝ ՀՀ դրամը (այսուհետ՝ դրամ): Այն հանդիսանում է նաև Հիմնադրամի այս ֆինանսական հաշվետվությունների ներկայացման արժույթը: Ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են դրամով:

3.3 ԴԱՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐԻ ԵՎ ԵՆԹԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ

Ներկայացվող ֆինանսական հաշվետվությունները ՖՀՄՍ-ների պահանջներին համաձայն պատրաստելու համար՝ Հիմնադրամը կատարել է ակտիվների և պարտավորությունների ներկայացմանը, բացահայտմանը վերաբերող մի շարք դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ:

3.4 ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ

Հիմնական միջոցները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները:

Հիմնական միջոցի օտարման կամ դուրսգրման հետևանքով առաջացած օգուտը կամ վնասը որոշվում է վաճառքից հասույթի և ակտիվի հաշվեկշռային արժեքի տարբերությամբ և ճանաչվում է տարվա արդյունքում:

Մաշվածությունը ճանաչվում է տարվա արդյունքում՝ կիրառելով գծային մեթոդը հիմնական միջոցի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում: Մաշվածության հաշվարկը սկսվում է այն պահից, երբ ակտիվը դառնում է մատչելի՝ իր նպատակային նշանակությամբ օգտագործելու համար:

ՈՉ ՆՅՈՒԹԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐ

Ոչ նյութական ակտիվները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և արժեզրկումից կորուստները:

3.5 ՇՆՈՐՀՆԵՐ

Շնորհը չի ճանաչվում, քանի դեռ չկա հիմնավորված երաշխիք, որ Հիմնադրամը կատարելու է դրան կից բոլոր պայմանները, և որ շնորհը ստացվելու է:

Շնորհները, որոնց հիմնական պայմանը Հիմնադրամի կողմից ոչ ընթացիկ ակտիվներ ձեռքբերումն է, ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչվում են որպես ակտիվներին վերաբերվող շնորհ և սիստեմատիկորեն ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ համապատասխան ակտիվի օգտակար ծառայության ժամկետի ընթացքում:

Այլ շնորհները ճանաչվում են սիստեմատիկ հիմունքով եկամուտ այն ժամանակաշրջանում, որի ընթացքում դրանք փոխհատուցում են համապատասխան ծախսումները, որոնց համար դրանք ստացվել են:

3.6 ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐ

Ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները ճանաչվում են, երբ Հիմնադրամը դառնում է ֆինանսական գործիքի պայմանագրային կողմ:

Ֆինանսական ակտիվներն ապաճանաչվում են, երբ լրանում են ֆինանսական ակտիվից ակնկալվող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները, կամ այն ժամանակ, երբ ֆինանսական ակտիվները բոլոր նշանակալից ռիսկերով ու հատուցումներով փոխանցվում են երրորդ կողմին:

Ֆինանսական պարտավորությունները ապաճանաչվում են, երբ դրանք մարվում են, վճարման ենթակա չեն, չեղյալ են ճանաչվել կամ լրացել է դրանց ուժի մեջ լինելու ժամկետը:

Բոլոր ֆինանսական ակտիվները սկզբնապես չափվում են իրական արժեքով՝ գումարած գործարքի հետ կապված ծախսումները:

Դրամական միջոցները բաղկացած են բանկային հաշիվների մնացորդներից:

3.7 ՀԱՏՈՒՑՈՒՄՆԵՐ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻՆ

Կարճաժամկետ հատուցումներն աշխատակիցներին այն հատուցումներն են, որոնք ենթակա են մարման ամբողջությամբ տարեկան այն հաշվետու ժամանակաշրջանի ավարտից հետո տասներկու ամսվա ընթացքում, որում աշխատակիցները մատուցել են համապատասխան ծառայությունները:

3.8 ԱՐՏԱՐԺՈՒՅԹՈՎ ԳՈՐԾԱՐՔՆԵՐ

Ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս՝ Հիմնադրամի համար գործառնական արժույթից տարբեր այլ արժույթով իրականացված գործարքները գրանցվում են գործարքի օրվա դրությամբ ՀՀ Կենտրոնական բանկի (ՀՀ ԿԲ) կողմից հրապարակված փոխարժեքով: Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով դրամային հոդվածները վերահաշվարկվում են՝ կիրառելով հաշվետու ամսաթվի դրությամբ ՀՀ ԿԲ կողմից հրապարակված փոխարժեքը:

Արտարժույթով գործարքներից, ինչպես նաև արտարժույթով արտահայտված դրամային հոդվածների վերահաշվարկումից առաջացած փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են ժամանակաշրջանի շահույթում կամ վնասում:

4. ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ԵՎ ԴՐԱՆՑ ՀԱՄԱՐԺԵՔՆԵՐ

ՀՀ դրամ	**2023թ.**	**2022թ.**
Էվոկաբանկ ՓԲԸ – ՀՀ դրամ	3,659,549	2,313,729
Էվոկաբանկ ՓԲԸ – ԵՎՐՈ	694,912	651,719
Էվոկաբանկ ՓԲԸ – ԱՄՆ դոլար	4,717,540	8,593,003
Ընդամենը	**9,072,001**	**11,558,451**

5. ԸՆԹԱՑԻԿ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐ (ԱՎԱՆԴՆԵՐ)

ՀՀ դրամ	2023թ.	2022թ.
Էվոկաբանկ ՓԲԸ- NA29562	-	21,605,781
Էվոկաբանկ ՓԲԸ- NA58287	208,884	-
Էվոկաբանկ ՓԲԸ- NA58288	20,874,474	-
Էվոկաբանկ ՓԲԸ- NA58289	8,298,806	-
Ընդամենը	**29,382,164**	**21,605,781**

2024թ. փետրվարի 6

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՄԱԹԵՄԱՏԻԿԱ ՀԻՄՆԱԴՐԱՄ

ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆ՝ **ԱՐԹՈՒՐ ՍԱՀԱԿՅԱՆ**